

ՌՈՒԲԵՆ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ


ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ


(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

ԵՐԵՎԱՆ — ԳԵՏԱՐԱՑ — 1936 թ.









ՌՈՒԲԵՆ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ


78(47.925)(092 Տիգրանյան)

Բ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

6682 437
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)



ՅԵՐԵՎԱՆ — ԳԵՏԱՐԱՏ — 1936 թ.

A 4063

Պատ. խմբագրի՝ Մ. ԱՂԱՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

1.

Հանրային ուսման ժողովրդական կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը բոլորեց իր ծննդյան 80-ամյակը :

Այս հարուստ կյանքի 55 տարին անցել է ստեղծագործական ուղին երով . 55 տարի շարունակ , Նիկողայոս Տիգրանյանը հանդիսացել է մեր յերաժշտական կուլտուրայի անխոնջ ու համեստ աշխատավորը : Անգամ այսօր , ութսունամյա սրտկառելի ծերունին շարունակում է ստեղծագործել : Ութ տասնյակ տարիները չեն կարողացել մթաղնել նրա ստեղծագործական պայծառ միտքը :

Այն կուլտուրական բաղաժը , վոր նա 55 տարի շարունակ կրել է իր ուսերին , շատ արժեքավոր և հարուստ մատերիալ ունի իր մեջ : Յեւ յայտեղ ամենից կարևորն այդ ժառանգության դեմոկրատիկ տարրն է : Նիկողայոս Տիգրանյանի կերտած արվեստը , վորտեղ գլխավոր առանցքը հանդիսանում են իրանական կլասիկ յերկերի մշակութիւնը և առաջ հայկական ժողովրդական սլարերը , վրացական ու քրդական մելոդիաները , շատ կարևոր արժեք է , արժանի մանրամասն ուսումնասիրության և վնահատանքի :

Կոմսոլոյիտոր Նիկողայոս Տիգրանյանի հայրը Թաղեոս Նաղարեթովիչ Տիգրանյանը ծնվել է 1823 թվին Ղարս քաղաքում: Մանուկ հասակում տեղափոխվում է Թիֆլիս և մտնում կլասիկական դիմնադիան, վորն և ավարտում է 19 տարեկան հասակում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո, Թաղեոս Տիգրանյանը նվիրվում է դինվորական ծառայության: Նա մասնակցել է ռուս-թրքական պատերազմին (1877—1878 թ.):

Կարճ ժամանակից հետո, Թաղեոս Տիգրանյանը բնակություն է հաստատում Ալեքսանդրապոլում: Այստեղ նա ամուսնանում է Յերանուհի Գորոյանի հետ, վորն այդ ժամանակ համարվում էր կրթված և լավ ուսում առած մի աղջիկ: Թե՛ Թաղեոս Տիգրանյանը և թե՛ Յերանուհի Գորոյան—Տիգրանյանը լավ գիտեյին հայերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուները. սիրում էյին գրականությունը և մեծ արժեք էյին տալիս յերաժշտության:

Սրանց յերկրորդ վորդին Նիկողայոսը, ապագա Կոմսոլոյիտորը ծնվել է 1856 թվի ոգոստոսի 19-ին (հին տոմարով) Ալեքսանդրապոլ քաղաքում: Վեց տարեկան հասակում, յերեսան 1862 թվին մտնում է Ալեքսանդրապոլի հայ կաթոլիկների դպրոց: Իննը տարեկան հասակում, այդ առողջ և կայտառ յերեսան ծաղիկ հիվանդություն է ստանում, վորի հետևանքով դրկվում է աչքերի լույսից: Տեղական բժշկությունը չի կարողանում մանուկին ապաքինել: Չեռք առած քոլոր միջոցները դուր են անցնում:



Ն. Տիգրանյանը 8 տարեկան հասակում

Ուրախ, անհող մանուկը կտրվում է արտաքին աշխարհից, նա դառնում է վշտոտ։ Այս դժբախտությունը չատ ծանր է անդրադառնում ծնողների վրա։

Մանուկ Նիկողայոսին բուժելու և նրան կույրեցի ինստիտուտ տեղափոխելու մտադրությամբ, հայրը իշ

վորդուն տանում և Մոսկվա և Պետերբուրգ : Բժշկու-
թյունն անդոր և գտնվում , իսկ ինստիտուտի դիրեկ-
ցիան մերժում և նրա դիմումը :

Նիկողայոս Տիգրանյանի յերաժշտական ընդունա-
կությունները հանդես են դալիս վաղ հասակից : Տա-
կավին Ալեքսանդրապոլ յեղած ժամանակ , նա իբ-
ծնեղատվայրում շատ եր լսել արևելյան յերաժշտու-
թյան ներկայացուցիչներին . Գյումրին հայտնի յեր-
տեղական և յեկվոր թառիոտներով , քամանչիստնե-
րով , վորոնց մեջ կային նաև լավ յերդիչ-աչուղիներ :
Այս բոլորը անջնջելի տպավորություն են թողնում
մանուկ Նիկողայոսի վրա :

Պետերբուրգի և Մոսկվայի անհաջող ճամբորդու-
թյունից հետո , Նիկողայոսի ծնողներն իրենց վորդուն
տանում են Թիֆլիս , ուր նա սկսում և դաշնամուրի
և դերձաներենի դասեր առնել : Յերկու տարի սուրե-
լով Թիֆլիսում , վորն այդ ժամանակ համարվում եր
Անդրկովկասի յերաժշտական կենտրոնը , Նիկողայոսը
բավական մոտից ծանոթանում և յեվրոպական և ու-
սական յերաժշտությանը : Նա առանձնապես հետա-
քրքրվում եր բոլոր աղգությունների ժողովրդական
սրբեղանավրներով : Այս ուսումնասիրությունից բա-
ցի , Տիգրանյանը քաջ ծանոթանում և դաշնամուրի
նվագին : Միաժամանակ սկսում և յուրացնել դերձա-
ներեն լեզուն :

Յերկու տարվա սխառմատիկ և լուրջ պարապ-
մունքից հետո , 1873 թվին , Թադևոս Տիգրանյանի իբ-
վորդուն տանում և Վիեննա : Արտասահմանցի լինելու
հանդամանքը մեծ դժվարությունների աւրիթ և տալիս
ինստիտուտ մտնելու համար :

Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտի ղիրեկտոր, պրոֆեսոր Մ. Պարլասեկին 17 տարեկան պատանուն վերցնում և իր պանսիոնում, իսկ ինստիտուտում նրան հնարավորություն են տալիս անցնելու բոլոր առարկաները: Այստեղ անհրաժեշտ և արձանագրել, վոր ինստիտուտի բոլոր դասախոսներն առանձին ուշադրություն են դարձնում Նիկողայոս Տիգրանյանի վրա:

Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտի բոլոր ուսանողներն, ինչպես հայտնի յե, ընդհանուր կրթություն ստանալուց անմիջապես հետո, պարտավոր եյին. վերջին կուրսերում նվիրվել վորեւ մասնագիտության. Նիկողայոս Տիգրանյանը անշուշտ չեթ կարող բացառություն կաղմել: Մասնագիտական ընտրությունը թողնվում եր ուսանողի հայեցողությանը:

Նիկողայոս Տիգրանյանն իբրեւ մասնագիտություն ընտրում և յերաժշտություն: Տարիներ շարունակ, Տիգրանյանը լուրջ կերպով դրադվում և իր ընտրած մասնագիտությամբ: Նա դաշնամուրի դասեր և վերցնում Վիեննայի կոնսերվատորիայի հանրածանոթ պրոֆեսոր Շեներից: Տիգրանյանը Վիեննայում ապրում և սովորում և ընդամենը յոթ տարի:

1880 թվին, ավարտելով ինստիտուտի լրիվ դասընթացները, լավ ուսումնասիրելով յերաժշտության տեսությունը և գերմանական, ինչպես նաեւ միջազգային յերաժշտական դրականության անվանի վարպետների ստեղծագործությունները, Տիգրանյանը վերադառնում և իր ծննդավայրը — Ալեքսանդրապոլ քաղաքը:

Մի տարի անց, 1881 թվականին, վախճանվում և
յերաթշտադետի հայրը՝ Թադեոս Տիգրանյանը: Հոր
մահը մեծ վիշտ և սլատճառում վորդուն: Այդ վշտի
հանրության տակ Նիկողայոս Տիգրանյանը, իբրև ի-
րենց տան ավագը, պետք և մտահոգվելը ընտանեկան-
նյութական հոգսերով: Տարիներ շարունակ, յերաթշ-
տադետը մեծ սիրով կատարում և ծնողական-ընտա-
նեկան իր պարտականությունը:

Վերադառնալով հայրենիք, Նիկողայոս Տիգրա-
նյանը սկսում և դրադվել յերաթշտական ստեղծադոր-
ծությամբ: Նա հատուկ ուշադրություն և դարձնում
անդրկովկասյան ժողովուրդների յերաթշտության
վրա, դրի առնելով բավական հարուստ նյութ: Այդ
հետաքրքրությունը նա ցույց էր տվել տակավին Թիֆ-
լիսում սովորելիս, նախ քան Ալստրիայի մայրաքա-
ղաք մեկնելը: Առանձին ուսումնասիրության նյութ
դարձնելով հայկական, վրացական և քրդական պար-
զեղանակների և ժողովրդական յերգերի վրա, Տիգրա-
նյանը հետագա տարիներում մեծ սեր և ցուցաբերում
իրանական կլասիկ յերաթշտության հանդեպ, լիոր և
հետագայում դառնում և յերաթշտադետի ստեղծադոր-
ծությունների հիմնական առանցքը:

1887 թվին, Մոսկվայում լույս և տեսնում Տիգ-
րանյանի առաջին յերկը «Անդրկովկասյան ժողովրդա-
կան յերգեր և պարեր»:

1893 թվականին, յերաթշտադետ Տիգրանյանը
յերաթշտական նոր ուսումնասիրությունները նորատա-
կով, մեկնում և Պետերբուրգ: Նա ներկայանում և
կոմպոզիտոր Ռիմսկի-կորսակովին և Սոլովյովին: Մի
ամբողջ տարի, նա սխառեմատիկ յերաթշտական տե-

առևթյան դասեր և վերցնում Սուլովյովից: Մի տարվա
կանոնավոր պարապմունքները խոշոր իմպուլս են հան-
դիսանում Տիգրանյանի հետագա ստեղծագործություն-
ների համար: Ապրելով Պետերբուրգում, Տիգրանյանը
լայն հնարավորություն և ունենում լսելու ունա դա-
սական յերաժշտության լավագույն յերկերը: Նույն
այդ թվին, Տիգրանյանը լույս և ընծայում իր յերկ-
րորդ յերկը «Բայաթի ֆյուրդ» դաշնամուրի համար,
վորից հետո վերադառնում և հայրենիք: Տարիների
ընթացքում նա շարունակում և դրի առնել իրանական
մուսիկներ, ինչպես նաև հայկական յիզանակներ:

1896 թվին, լույս են տեսնում «Բայաթի շիրազ»,
իսկ հետագա տարիներում «Հեյդարի», «Շահնազ»,
«Զարգահ», «Հայկական յերգեր» և այլ աշխատու-
թյուններ, բոլորն էլ դաշնամուրի համար գրված:

Նիկողայոս Տիգրանյանի անդրանիկ համերգը կա-
յանում և 1894 թվի ապրիլի 22-ին Պետերբուրգում:
Այդ համերգում կատարվել են իրանական, հայկական,
վրացական և քրդական մելոդիաներ. ծրագրում յեղել
են թե՛ տպագիր և թե՛ անտիպ աշխատություններ:
Վերոհիշյալ համերգի մասին արժանավայել կերպով
արտահայտվել են՝ «Новости», «Петербургская га-
зета» և այլ հանդեսներ ու որաթերթեր:

Տիգրանյանի յերկրորդ համերգը, մասամբ նոր
ծրագրով, կրկնվում և 1898 թվին Պետերբուրգի կոն-
սերվատորիայի դահլիճում, վորտեղ ներկա են յեղել
կոնսերվատորիայի պրոֆեսորները, ուսանողությունը
և արվեստի ու գրականության ճակատամասի աշխա-
տողները: Այդ համերգի մասին, մեծ դովեստով խո-
սում են «Journal de St. Peterbourg» (Փրանսերեն),

«St. Petersburg zeitung» (գերմաներեն) և «Петербургские ведомости» թերթերը :

Յերաժշտության տեսարան և քննադատ Սոլովյովը «Новости» լրագրում գրում է .

«Տիգրանյանն իր պիեսների մեջ շատ հարադատ կերպով է ըմբռնել արևելյան յեղանակների վոդին , յեթե չենք սխալվում , կովկասյան յեղանակների նմանորինակ մանրադնին , ուղիղ և գեղարվեստական մշակում մեր յերաժշտական աշխարհում կատարվում է առաջին անգամ» :

«Петербургская газета» , անդրադառնալով Տիգրանյանի համերգին , գրում է .

«Տիգրանյանի յեղանակները , վորոնք ունենալդային բնավորություն , շատ հետաքրքիր են բովանդակության կողմից» :

Պահպանողական «Новое Время» խոսելով Արևելյան յերաժշտության մասին , իր խոսքը կոնկրետացնում է Տիգրանյանի մասին , նշելով հետևյալը .

«Ինչպես այս գործի առաջին սլիոներ , Տիգրանյանը ամենից առաջ արժանի յե կատարյալ համակրանքի և աջակցության . ստանալով յերաժշտական լուրջ կրթություն , նա կարող է մեծ ծառայություններ մատուցանել կովկասի յերաժշտագիտությանը , վորի մասին , մինչ նա , վոչինչ չի արված մինչև այժմս Ռուսաստանի այս հարուստ մասում ասլրող յեվրոպացիներին ձեռքերով» :

Այնուհետև նիկողայոս Տիգրանյանը մի շարք համերգներով հանդես է գալիս Անդրկովկասյան բաղամթիվ քաղաքներում :

Նիկողայոս Տիգրանյանն իր ստեղծագործություններն համար նյութ եր քաղում այն բոլոր հայ, վրացի, քուրդ և պարսիկ նվագողներից ու յերգիչներից, վորոնք գալիս էին Ալեքսանդրապոլ: Այս տեսակետից յերաժշտագետին բավական հարուստ մատերիալ և այլև Մելիք-Աղամալյանը (1830—1906), վորն իր ժամանակին, Անդրկովկասում համարվում եր անվանի լիառիստ: Նրա համբավը տարածված եր Անդրկովկասի սահմաններից դուրս: Նա նվագում եր նաև քամանչա: Տակավին չափազանց յերիտասարդ, նա մեծ վարպետությամբ և հուղականությամբ նվագում եր արևելյան ամենաբարդ ու դժվարին յեղանակները: Մելիք-Աղամալյանի ծրագրում խոշոր տեղ էին դրավում իրանական կլասիկ յեղանակները:

Անհրաժեշտ ե արձանագրել, վոր Տիգրանյանի մեջ տեր դեպի արևելյան յերաժշտություն դարձեցրեց Մելիք-Աղամալյանը: Նրա նվագի ու խորհրդի աղդեցության տակ, Տիգրանյանը վերջնականապես նվիրվում ե իրանական յերաժշտության մշակույթին: Այս սերն ու ցանկությունը կրկնապատկվեց հատկապես այն շրջանում, յերբ նշանավոր թառիստը Յերևանից անդափոխվեց Ալեքսանդրապոլ: Այս բանին վորոշ չափով ոժանդակել ե նաև հայտնի իրանական յերգիչ Սաթթարը:

1912 թվին արդեն Տիգրանյանի հրատարակած յերկերի (opus) թիվը կազմում ե տասը, ուր ամփոփված են 35 կտոր գործ:

1914 թվի հունիսի 1-ին, Ալեքսանդրապոլ քաղաքի հասարակական և արվեստի կազմակերպությունները մեծ հանդիսավորությամբ տոնում են յերաժշ-

առաջինի յերաժշտական դործունեյության 25 ամյակը : Այդ առթիւ հայկական մամուլը բավական մեծ տեղ և հատկացնում Տիգրանյանի կյանքին և յերաժշտական ստեղծագործություններին :

1914 թվին, Նիկողայոս Տիգրանյանը մեկնում և արտասահման, Բերլին և Վիեննա, տալով իր սեփական ստեղծագործություններից մի շարք համերգներ : Այդ համերգների շուրջն արտահայտվում են դերմանական և ավստրիական թերթերը :

Համաշխարհային պատերազմի տարիներին, Տիգրանյանն ապրում և իր ծննդավայր—Ալեքսանդրապոլում :

Հայաստանի խորհրդայնացումից հետո, Տիգրանյանն իր բոլոր ստեղծագործական ուժերը նվիրում և խորհրդային Հայաստանի յերաժշտական կուլտուրայի վերելքին :

Ալեքսանդրապոլ քաղաքի Լուսբաթնի հանձնարարությամբ, 1921 թվին Տիգրանյանն իր հայրենի քաղաքում կազմակերպում և յերաժշտական սեկցիա—ստուդիա, մեկ ու կես տարի ղեկավարելով այդ ստուդիան :

1921 թվի սեպտեմբերին, ՀՍԽՀ Ժողկոմխորհի վորոշման համաձայն, Նիկողայոս Տիգրանյանն ստանում և վաստակավոր դրական—գեղարվեստական դործչի կոչում :

1922 թվին Տիգրանյանն Ալեքսանդրապոլում հիմք և դնում կույրերի դպրոցի, վորտեղ ավանդվում և նաև յերաժշտություն : Այս դործին խոշոր մասնակցություն և բերում անվանի արվեստագետը :

Հայաստանի խորհրդայնացումից հետո, Տիգրանյանը մի շարք համերդներում հանդես ե գալիս Յերևանում, Լենինականում, Թիֆլիսում և այլ քաղաքներում:

1927 թվի հունվարի 20-ին, Լենինգրադի Պատմության և Կուլտուրայի Պետական Ակադեմիկ ինստիտուտի հրավերով, Տիգրանյանը կարդում է մի հետաքրքիր դեկուցում արևելյան յերաժշտության մասին: Այդ դեկուցմանը ներկա յեն դանվել ակադեմիկոսներ, պրոֆեսորներ և յերաժշտադետներ: Իր ներածական խոսքում, ակադեմիկոս Մառը կանգ ե առնում Տիգրանյանի կատարած խոշոր դերի վրա: Տիգրանյանի այդ դեկուցման մի քանի կարևոր կետերը լույս են տեսել «ЖИЗНЬ ИСКУССТВА» հանդիսում (1927 թվի փետրվարի 15, № 7):

1933 թվի ապրիլ ամսին, ՀԽՍՀ Խորհրդային Կոմպոզիտորների Միությունը Լենինականում տոնում է Նիկողայոս Տիգրանյանի յերաժշտական դործունեյության 50-ամյակը: Այս առթիվ հայկական ԽՍՀ-ն նրան շնորհեց հանրապետության Ժողովրդական կոմպոզիտորի կոչում:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարբեր հրատարակությունների միջոցով լույս են տեսել Նիկողայոս Տիգրանյանի թե՛ տպված և թե՛ անտիպ աշխատությունները: 1935 թվին ՀԽՍՀ Պետական հրատարակչությունը լույս ընծայեց Ժողովրդական կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանի «Հայ Ժողովրդական պարերի» Ժողովածուն, Ռ. Թերլեմեզյանի ներածական հոդվածով: Այս Ժողովածույի մեջ ամփոփված են տաս հայկական պարեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
14.7.57 թ.Ա.

1927 թվին Լենինգրադում լույս տեսավ Գյոմբե-
րու աշխատությունը «Նիկողայոս Տիգրանյանը և Ա-
րևելյան յերաժշտություն», վորի առաջաբանը գրել
էն Ալեքսանդր Սպենդիարյանը և ակադեմիկոս Մաուր;

3.

Հանրապետության ժողովրդական կոմպոզիտոր
Նիկողայոս Տիգրանյանն իբրև ստեղծագործող հանդես
յեկավ անցյալ դարի վերջերին: Նրա առաջին յերկը
լույս տեսավ 1887 թվին:

19-րդ դարի վերջին քառորդին, հայ յերաժշտա-
կան կուլտուրայի ճակատամասում տեղի են ունենում
նշանակալից տեղաշարժեր:

Յերաժշտագետների մի սակալաթիւ խումբ ըս-
կսում ե հաւաքել, մշակել և գեղարվեստականորեն
վերարտադրել թե՛ հայկական ժողովրդական, թե՛ հո-
գևոր և թե՛ արևելյան բաղմապիսի յեղանակներ: Այս
աշխատանքի ղլխավոր դեմքերը կովկասահայ իրակա-
նության մեջ համարվում են ին Կարա-Մուրզան, Մա-
կար Յեկմալյանը, Նիկողայոս Տիգրանյանը և Սողո-
մոն Գեվորգյանը (Կոմիտաս):

Կարա-Մուրզան, ժողովրդական յերգի այդ անդ-
րանիկ սլիոներներից մեկը, իր ժամանակին հաւաքեց
աւ մշակեց բաղմաթիւ ժողովրդական յերգեր՝ մեներ-
գի և խմբերգի համար, նրա թողած յերաժշտական
ժառանգության մեջ կան նաեւ ազգայնական մոտիւ-
ներ:

Մակար Յեկմալյանն ամբողջապես կլանվեց հոգե-
վոր յերգերի մշակույթով: Այդ յերգերի մեջ նա թա-

փեց իր վողջ ստեղծագործական կարողությունները :
Յերածառագետի կողմից մշակված ժողովրդական յեր-
գերը խոշոր գեղարվեստական արժեք չեն ներկայաց-
նում :

Նիկողայոս Տիգրանյանն , վորն այդ սերնդի ավագ
ներկայացուցիչներից մեկն էր , գլխավորապես նվիր-
վեց իրանական յերածառության մշակութին , աչքա-
թող չափելով նաև հայկական ժողովրդական սլարե-
ղանակները : Նրա յերածառական ժառանգության մեջ
կան նաև վրացական և քրդական մելոդիաների մշա-
կումներ :

Կարա-Մուրդալի , Մակար Յեկմալյանի արվեստը
ընթացավ վոկալ արվեստի ուղիներով : Տիգրանյանն
իր վողջ ուշադրությունը կենտրոնացրեց դաշնամու-
րային յերածառական դրականության վրա , դառնալով
կովկասահայերի մեջ այդ արվեստի հիմնադիրը : Ընդ-
ե , վոր անվանի վարպետն իր յերածառական գործու-
նեյության ընթացքում դրադվել է նաև վոկալ արվես-
տի մշակութով , սակայն եպիդոդիկ կերպով միայն :
Նիկողայոս Տիգրանյանը հայ յերածառության սլաու-
մության մեջ իր սլատվավոր տեղն ունի իբրև դաշնա-
մուրային դրականության ներկայացուցիչ :

Յեթե Կարա-Մուրդան վերցնում էր վորևե մելո-
դիա և այն մշակութի յենթարկում , յեյնելով իր
ստեղծագործական սկզբունքներից , և յեթե Մակար
Յեկմալյանը մշակութի էր յենթարկում հողևոր յեր-
գերը , մոտենալով այդ մշակութին իր ստեղծագոր-
ծական սկզբունքներով , ապա նույնպիսի տշխատանքի
մեթոդ էր կիրառում նաև Նիկողայոս Տիգրանյանը :
Առաջին յերկուսը մոտենում էյին վոկալ արվեստին

իբրեւ հում նյութի, Տիգրանյանը մոտենալով նույն վորակի յերաժշտական մատերիալի, այն բոլորը արտահայտում եր դաշնամուրի հնչյուններով: Աշխատելով յերաժշտական կուլտուրայի վրայ և ինստրումենտալ բնադավառներում, անցյալ դարի վերջում իր յերաժշտական դործունեյությունն սկսած այդ յեռյակը, ի վերջո ձգտում եր միևնույն նպատակի—հավաքել, կորստից փրկել և մշակույթի յենթարկել բաղմահարուստ յերգերը: Այս տեսակետից խոշոր դործ ե կատարել յերաժշտական յեռյակի յուրաքանչյուր անդամը:

Նիկողայոս Տիգրանյանն իբրեւ ստեղծագործող շահամանափափելեց աղգային յերաժշտության շրջանակում: Մելիք-Աղամալյանի հիասքանչ նվագը նրա մեջ խոշոր հետաքրքրություն դարթեցրեց դեպի արևելյան յերաժշտություն, ուր իբրեւ գլխավոր ֆակտոր կարեւոր դեր ե խաղում իրանական կլասիկ յերաժշտական արվեստը:

Վերցնելով բաղմասլիսի մելոդիաներ, հատկապես մուղամաթներ, Տիգրանյանն այդ բոլորը վերածել ե յեվրոպական յերաժշտության չափի և սկզբունքների: Թառի և քամանչայի վրա հնչող յելեվեջները անշուշտ նույնությամբ չեյին կարող հնչել դաշնամուրի ստեղնաչարերի վրա: Տիգրանյանի գլխավոր մտահոգությունն եր հիմնականում պահպանել մելոդիայի հարադատությունը: Դործագրության դնելով յեվրոպական յերաժշտության չափն ու սկզբունքները, Տիգրանյանը կարողացել ե պահպանել իր մշակած յեղանակների ընդհանուր կառուցվածքն ու վոճը: Յեւ յեթե յերբեմն վորոշ հնչյուններ, վորեւե մելոդիայի և յե-

բաժնատերան հյուսվածքի մոտոշ ողակներ նշաններ ևն
ցույց տալիս շեղվելու ընդհանուր յերաժշտական
պատկերից, սակա այդ չարիարանց հաղվադոտ և և
հիմնականում կարևոր դեր էի խաղում Տիգրանյանի
մշակույթների մեջ:

Ինչպես նշեցինք Նիկողայոս Տիգրանյանն աշխա-
տել ու ստեղծագործել և դաշնամուրի համար: Սա-
կայն Հայաստանի խորհրդայնացումից հետո, հաս-
կապես վերջին տարիները, հարգելի արվեստագետը ա-
վելի քան ընդարձակել և իր ստեղծագործական տեսա-
դաշտը: Դաշնամուրի համար դրած իր մի շարք կարե-
վոր աշխատությունները նա վերածել և սիմֆոնիկ
նվագախմբի, լարային կվարտետի, տրիոյի (ջութակ,
թավջութակ և դաշնամուր): Այս տեսակետից հիշա-
տակության արժանի յեն «Չարգահ», «Բայաթի
ֆուրդ», «Թարս պար», «Դյուզ պար», «Շարաշուր»,
«Հետ ու առաջ», մոտոնք գլխած են սիմֆոնիկ նվա-
դախմբի համար: Յերաժշտագետը լարային կվարտե-
տի յե վերածել «Բայաթի Շիրազ», «Չորան բայաթի»,
«Նավրուզ արաբի» և «Չուռնի տրնգի»:

Սոսք էի կարող լինել այն մասին, մոտ սա նոր մո-
րակ և նոր թռիչք և յերաժշտագետի ստեղծագործու-
թյունների համար: Այս աշխատանքին նա ձեռնարկեց
խորհրդային կարգերում, յերբ պատկառելի արվես-
տագետի առաջ բացվեցին ստեղծագործական ավելի
լայն հեռանկարներ:

Նիկողայոս Տիգրանյանը մեր յերաժշտական կուլ-
տուրայի այդ ավագ դեմքը, իր հարուստ կյանքի 55
տարին, ավելի քան կես դար, անցկացրեց ստեղծա-
գործական բարդ ասպարիզում: Նա աշխատեց անխոնջ

ու համեմատ, մեղ ժառանգություն թողնելով հարուստ
մի դանձ, վորն աշտոր և վաղը լուրջ ուսումնասիրու-
թյան առարկա սկսեց և դառնա: Հարգելի արվեստա-
դետն աշխատում և նաև աշտոր, ութսունամյա հասա-
կում, նա աշխատում և վառվում յերկտասարդի
նման:

Նիկողայոս Տիգրանյանի արվեստը իր մեջ ունի
ժողովրդական յերդի դեմոկրատիկ ուժեղ շեշտ. աշա-
տեսակետից նույնպես չարադանց դեահատելի յե նրա
մատուցած ծառայությունը մեր յերաժշտական կուլ-
տուրային:

Նիկողայոս Տիգրանյանն այն ատաղավոր մտաւո-
րականներից էր, վորոնք Հայաստանի խորհրդայնա-
ցումից հետո, իրենց ստեղծագործական վողջ կարո-
ղությունները ի ստրա դրեցին Հայաստանի խորհր-
դային յերաժշտության ծաղկմանը: Նա իր սիմֆո-
նիկ, լարային և այլ ժանրի գործերը դրեց այն ժա-
մանակ, յերբ մեր յերկրում ծածանեց խորհուրդների
փրկարար դրոշը:

Նիկողայոս Տիգրանյանն իր արժանի դեահատա-
կանն ստացավ խորհրդային կարգերում: Հայկական
ԽՍՀ Կառավարությունը նրան տվեց հանրապետու-
թյան ժողովրդական կոմսոլիտոսի և աշխատանքի
հերոսի կոչում: Նա արժանացավ խոշորագույն պատ-
վի:

Հայաստանի խորհրդայնացման 14-րդ տարեդար-
ձին, հարգելի արվեստագետը «Խորհրդային Սովետ»
հանդեսում, զուգահեռ անցկացնելով ցարական և
խորհրդային իշխանության միջև դրում էր.

«Ցարական Ռուսաստան և նրա հետամնաց
դաղութ Հայաստան: Մենք, հին սերնդի ներ-


կայացող իշխեցա շատ լաւ էնք պատկերացնում
խաւարի, տղիտության, բռնակալության այդ ա-
րյունոտ թաղաւարությունը: Բայց նա արդեն
անցյալի դիրկն է անցել, նա լոկ ծանր մղձա-
ւլանջ է այժմ: Հոկտեմբերյան մեծ հեղափո-
խությունը թաղեց այդ ամենն անվերադարձ
կերպով: Մենք այժմ կերտում ենք նոր կյանք,
նոր աշխարհ, նոր կուլտուրա:

Հենց Խորհրդային Հայաստանի յերաժշտա-
կան կյանքում մեր նվաճումները չափադանց
մեծ են: Ո՞վ կարող էր անցյալում յերազել
հայկական ոպերայի մասին: Իսկ մենք այսօր
ունենք մեր ոպերան: Յեւ վոչ միայն ոպերա:
Մենք ունենք պետական կոնսերվատորիա,
պրոֆյերաժշտական դպրոցներ Յերեւանում,
Լենինականում և Կիրովականում, Յերեւանի
Հայլֆիլհարմոնիան, Կոմիտասի անվան կլար-
տետը և այլն:

Այս նվաճումներով, սակայն չսրեւք ե հան-
դըստանալ: Խորհրդային ստեղծագործողի ա-
ռաջ դրված խնդիրները մեծ են և պատասխա-
նատու: Մեզ վրա պարտականություն է դրվում
սալ մեր աշխատավորությանը խոշոր արժեք
ներկայացնող նոր ստեղծագործություններ և
մենք պարտավոր ենք կատարել այդ:

Վստահ եմ, վոր կկատարենք»:

Ջերմ վողջույն մեր հոբելյարին, Հայկական Սո-
ցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողո-
վրդական կոմպոզիտոր և աշխատանքի հերոս Նիկո-
ղայոս Տիգրանյանին:



Գլավիտի լիազոր Ա.— 1198
Հրատ. 3961. Պատվեր 1505 Տիրաժ 2000
Յերեվան, Պետհրատի տպարան, II կնուկյանցի, № 4

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038308

0543

4-44 20 4.

19

I
A 4063

Р. ТЕРЛЕМЕЗЯН

Н и к. Т и г р а н я н

Гиз ССР Арменин, Ереван, 1936 г.

ров, 1940 г.